Կեցցե՛ս, Կարեն

Մեր գրոսմայստերների ընտանիք մուտք գործեց ևս մեկ օժտված շախմատիստ: Մուտք գործեց հաստատուն քայլերով, վճռական մտադրություններով: Դա բնական է, չէ՞ որ մեր հերոսն ընդամենը 17 տարեկան է: Բայց արի ու տես, որ այդ տարիքում նա՝ Կարեն Ասրյանը, վստահ ելույթներ է ունեցել միջազգային խոշոր մրցաշարերում և նույնիսկ հասցրել է ամբողջ ձայնով խոսել երևանյան համաշխարհային 32-րդ օլիմպիադայում:



Տաղանդից բացի, Կարենն աչքի է ընկնում նաև նախանձելի աշխատասիրությամբ և համառությամբ: Որպես կանոն, միշտ էլ սառնասրտորեն պայքարում է մինչև վերջին «կաթիլի» անհայտանալը, կարծես ամեն անգամ որոշվում է լինել-չլինելու հարցը: Շատ դեպքերում հակառակորդները տարակուսում են, որ վերջնախաղերում, միանգամայն հավասար իրադրություններում, Կարենը չի համաձայնվում ոչ-ոքիի, «քրքրում է» դիրքը, փնտրում հաղթանակի ուղիներ: Քանի՞-քանի «մեռյալ» ոչ-ոքի համարվող դրություններում Կարենը մերժել է հակառակորդների խաղաղ բանակցությունները և ի վերջո հաջողությունների հասել:

Համեստ և քչախոս պատանին արդեն երկու անգամ կատարել էր գրոսմայստերական նորմա: Եվ շախմատի այդ բարձրագույն կոչման փաստաթղթերը վերջնականապես ձևակերպելու համար անհրաժեշտ էր ևս մեկ անգամ հատել բաղձալի սահմանագիծը: Երրորդ՝ վճռական գրոհը կայացավ Սանկտ Պետերբուրգի ավանդական միջազգային մրցաշարում, որտեղ ինը հնարավորից վաստակելով 6,5 միավոր, հայ շախմատիստը տուն դարձավ նվիրական երազանքն իրականացրած:

Ճիշտ է, այսօր աշխարհում անհամեմատ մեծացել է գրոսմայստերների քանակը, սակայն պատանիների մեջ շատ քչերին է շնորհվել այդ կոչումը: Հիշենք, որ երկար տարիներ ռեկորդակիր էր համարվում աշխարհի անպարտելի չեմպիոն, ամերիկացի Ռոբերտ Ֆիշերը, որը գրոսմայստեր դարձավ 15 տարեկանում: Եվ միայն վերջերս նրան գերազանցեց ֆրանսիացի էթյեն, գրոսմայստերի կոչում ստանալով 14 տարեկանում: Իսկ օրերս, Կիևի միջազգային մրցումներում, հաղթող ճանաչվեց և գրոսմայստերի կոչման վերջնական հայտ ներկայացրեց ուկրաինական փոքրիկ քաղաքներից մեկի ներկայացուցիչ Ռուսլան Պոնոմարյովը, որը նույնպես 14 տարեկան է: Այդ «հրաշամանուկին» պետք է որ հիշեն մեր մարզասերները. այս տարվա սեպտեմբեր ամսին Երևանում նա նվաճեց աշխարհի մինչև 18 տարեկան շախմատիստների չեմպիոնի կոչումը:

Այնպես որ, շախմատային բարձունքները հաղթահարելու ճանապարհին մեր Կարենը՝ հանձին սրանց և էլի ուրիշ շնորհաշատ պատանիների, ապագայում կունենա արժանի և վտանգավոր մրցակիցներ: Ինչևէ, այսօր իրեն երջանիկ է զգում նաև Կարենի հայրը՝ Արարատ Ասրյանը: Երջանիկ է ոչ միայն որպես հայր: Նա նաև իր որդու մշտական մարզիչն է: Ճիշտ է, ավագ Ասրյանը բարձրակարգ շախմատիստ չէ, բայց հմուտ մանկավարժ է, ունի պարապմունքներ անցկացնելու իր մեթոդներն ու առանձնահատկությունները:

Դե ինչ, պատանի գրոսմայստերը, ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի առաջին կուրսի ուսանողը դուրս է եկել մեծ նավարկության: Հավատացած ենք, որ այն անխափան կլինի...

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Սանկտ Պետերբուրգում Կարենի խաղացած պարտիաներից մեկը:

Կ.ԱՍՐՅԱՆ-Վ.ԿԱՐԱՍՅՈՎ(Ռուսաստան)

(Սիցիլիական պաշտպանություն)

N 111



Այս դիրքն առաջացել է սպիտակների 21-րդ քայլից հետո:

Սկզբնախաղից հետո տիրելով նախաձեռնությանը, հայ պատանին ճնշումը մեծացնում է և՛ թագուհու, և՛ արքայական թևերում: Այնուհետև սահմանափակելով հակառակորդի թագուհու գործողությունները, նա շեշտակի գրոհ է ձեռնարկում նրա արքայի վրա: Սպիտակների 21-րդ քայլից հետո հարվածի տակ են գտնվում նրանց և՛ ձին, և՛ փիղը, և՛ նավակը: Ավա՜ղ, դրանցից որևէ մեկի շահումը սևերին հասցնում է պարտության: Այդուհանդերձ, անտարբերությունը նույնպես կործանարար էր նրանց համար: Եվ սևերը հրապուրվում են ավելի արժեքավոր խաղաքարի շահումով: Արդյունքում՝ սևերի արքան դուրս է գալիս տհաճ ճանապարհորդության և արագորեն հալածվում սպիտակների ուժերի կողմից.

1. e4 c5 2. Ձf3 Ձc6 3. d4 cd 4. Ձ:d4 Թb6 5. Ձb3 Ձf6 6. Ձc3 e6 7. Փd3 Փb4 8. 0-0 0-0 9. Փe3 Թc7 10. Ձb5 Թb8 11. a3 Փe7 12. f4 e5 13. c4 ef 14. Փ:f4 Ձe5 15. c5 b6 16. Փ:e5 Թ:e5 17. Նf5 Թb8 18. e5 Ձe8 19. Փc4 Փ:c5 20. Ձ:c5 d5 21. Ն:f7 Ա:f7 22. Թ:d5+ Ագ6 23. Թc6+ Ահ5 24. Փe2+ Ագ5 25. Ձe4+ Աf4 26. Նf1+ Աe5 27. Ն:f8, և սևերը հանձնվեցին:

Նրբանկատ մարդը

1910-ին աշխարհի չեմպիոն Լասկերը Շլեխտերի հետ կայացած մրցախաղում մեծ դժվարությամբ կարողացավ խուսափել պարտությունից և բավարարվեց 5:5 հաշվով: Վերջին՝ 10-րդ խաղից առաջ, աշխարհի չեմպիոնի մրցակիցն առաջ էր անցել հաշվի մեջ, սակայն եզրափակիչ հանդիպումում ունենալով առավելություն, այդուհանդերձ պարտվեց:

Այդ կապակցությամբ Լասկերը թղթակիցներին հետևյալ բացատրությունը տվեց.

- Պարոն Շլեխտերն այնքան նրբանկատ մարդ է, որ ի ծնե օժտված չէ իրեն վերագրելու ուրիշինը, նույնիսկ եթե դա վերաբերում է շախմատի աշխարհի չեմպիոնի կոչմանը:

Սգո օր

1831-ին Անգլիայի ուժեղագույն վարպետներից մեկը՝ Ուիլյամ Լյուիսը, այցելեց գերմանական հանրահայտ շախմատային Շտրեբեկ ավանը, որպեսզի ուժերը չափի տեղացի ուժեղագույն շախմատիստի հետ:

Կենտրոնական հրապարակում խաղացվեց կենդանի շախմատ, որին ներկա էին ավանի 1400 բնակիչները:

Երբ հյուրը հաղթանակ տարավ, ցնցված շտրեբեկցիները հագան... սգո զգեստներ:

N 112



Հաղթանակ

Նախորդ համարում տպագրված էտյուդի լուծումը.

1. Աg7 Թd8 2. b4 Թc8 3. Փc7 Թa8 4. Փb8, և սևերի թագուհին բանտարկված է:

Բաժինը վարում է
ՀՀ վաստակավոր արզիչ
ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԸ